

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ *

Պատրիններ

Այս հարցը որով մենք այս երեկոյ պիտի զբաղուենք, գուցէ շատերին թուայ առաջնակարգ կարևորութիւնից զուրկ՝ կամ առնուազն այրող այժմէութիւն չունեցող մի նիւթ։ Բայց հաւատացած եղէք, որ ամեն վայրկեան նա կարող է դառնալ էական մեր երկրի արտաքին քաղաքականութեան համար։ Այս կլուրում, որի անդամները միշտ կողմնակից են եղել աղատութեան և մարդասիրութեան, կմյ արդեօք մի հատիկ մարդ, որ անտարբեր լինէր դէպի այն բոլորը, ինչ կատարում է Մերձաւոր Արևելքում։ Այնքան էլ հեշտ չէ արևմուտքում ճշտութեամբ իմանալ իրողութիւնները։ Թոյլ տուէք ինձ ուրեմն այս հակիրճ տեսութեան մէջ մի փոքր աւելի ծանրանալ փաստերի վրայ։ Կարծւում է, թէ մեր երկիրը ներկայումս աւելի պակաս է հետաքրքրում արտաքին գործերով քան առաջ։ Մեր մամուլը այժմ աւելի նուազ է զբաղում այդ ինդիրներով քան անցեալում, բացի սուր կրիզիսի ժամանակներից, երբ որևէ խոշոր ընդհարում, ինչպէս ոռու-ճապոնականն է, դրաւում է ընդհանուր ուշադրութիւն։ Ճշմարիտ է, որ մեր Անգլիայում կրթուած մարդիկ՝ զբաղուած հասարակական և անտեսական խոշոր ինդիրներով՝ այսօր աւելի սակաւ են ուշադրութիւն դարձնում արտաքին քաղաքականութեան վրայ, քան սրանից երեսուն, քառասուն կամ յիսուն տարի առաջ։

Արևելեան հարցը, սրանից երեսուն-քառասուն, յիսուն տարի առաջ սակայն մի հին հարց էր։ Մեզանից ոչ ոք չի կարող յիշել, թէ նա Յորք էր նոր։ Այս ծեծուած ինդիրի մասին արդէն որքան հատորներ են գրուել։ Սակայն նա շատ պարզ

*) Այս վերնագրի տակ Revue de Paris-ի մայիս 15 թ-ում հրատարակուած է Զէմս-Բրայսի մի քաղաքական ճառը, որ ականաւոր անգլիացին արտասահել է այս տարուայ մարտ 10/23-ին, Լոնդոնի Eighty Club-ում։ Մենք տալիս ենք այս թարգմանութիւնը մի քանի չնչին յապաւումներով։

է, թէ մարդ անկեղծօրէն կամենայ նրա իսկական բացատրութիւնը գտնել, որ հետևեալն է. Արևելեան եւրոպայում և Արևմտեան Ասիայում կայ ուզմասէր մարդկանց մի խումբ, որը մենք անուանում ենք թիւրք կառավարութիւն, և որը այն օրուանից՝ երբ դուրս է պրծել իր դեղին Ասիայի խորքերից, ուրիշ զբաղմունք չի՞ունեցել բայց եթէ կողոպտել և կոտորել իր տիրապետած ժողովուրդներին: Եւ այս մարդկանց (թիւրքերին) քաղաքակիրթ եւրոպան ճանաչում է և վարում է հետները, որպէս մի քաղաքակիրթ պետութիւն: Մենք տանում ենք նրանց, կարելի է ասել նոյնիսկ, որ մենք պահպանում ենք նրանց, որովհետև Թիւրքիայի տէրերը՝ ապստամբութիւնների չորհիս գահնէնկէց կամ հարեւանների արշաւանքներով հալածական՝ վաղուց հետէ անյայտացած կը լինէին, եթէ մեծ պետութիւնները այնքան եռանդով նրանց չպաշտպանէին:

Երկու խոշոր գծեր ընորոշում են Թիւրքական պետութիւնը՝ նախ այն, որ նա ապրում է ոչ իր սեփական ոյժերով, այլ ուրիշ տէրութիւնների փոխադարձ նախանձով, և երկրորդ՝ որ երբէք չի կարողանում բարենորդուիլ: Այսօր նա աւելի վատթար է քան ԽVI-րդ դարում, որովհետև այն ժամանակ նա ունէր Սէլիմ և Սուլէյման սուլթանների նման մեծապէս օժտուած պետեր: Այժմ ոչ միայն այդ դժբախտ միապետութիւնը չունի իր մէջ վերանորոգութեան որևէ կարելիութիւն, այլ նոյնիսկ գտնուած է այնպիսի կացութեան մէջ, որ ոչ նրան բարենորոգել չի կարող: Սա ամենքի համար ապացուցուած մի խնդիր է:

* *

Արևելեան հարցի ներկայ փուլը, ֆազիսը սկսուած է XIIX-րդ դարի սկզբներից և շարունակում է մինչև այժմ: Յունական ապստամբութիւնը սկիզբ դրեց այն խոշոր տրագետիային, որի ընթացքում ընկնուած ժողովուրդները մէկը միւսի յետեից Յունաստանը, Սէրբիան, Բուլգարիան, Կրետէն—աղատուեցին թիւրքական լծից և քաղաքակիրթ ազգերի շարքը բարձրացան: Մինչև Բէրլինի Դաշնադրութիւնը այս աղատագրութիւնը շարունակ անում էր, որպէս միակ խոչնդու ունենալով Եւրոպայի միջամտութիւնը յօդուտ Թիւրքիայի: Այս դրամայի նորագոյն յեղեղումը եղաւ Բէլինի դաշնագիրը 1878-ին: Մուսները 1877-ին միջամտեցին տարուած մի մեծահոգի մղումով դէպի տառապող ցեղերը, ինչպէս և իրանց շահերի համար նրանք ջարդեցին թիւրքերին, անցան Բալկանը, Սան-Ստեֆանօյում, կոստանդնուպոլսի դրսերի առաջ, նրանց թելադրեցին մի դաշնագիր, որով աղատում էր Մակեդոնիան

համարեա ամբողջապէս, և որ տալիս էր Ռուսիային Փռքը-Ա-սիայի հայերի հովանաւորութիւնը: Լորդ Բիկոնսֆիլդի և լորդ Սալզբրիի Անգլիան ոչնչացրեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը և ներլինի դաշնագրով Մակեդոնիան վերատին դրեց Թիւրքիայի լծի տակ: Մակեդոնիան այնուհետեւ դարձաւ մի որս Թիւրքիայի ձեռքին, այս անողորմ հալածողի, որ երբէք չկատարեց խոստացուած բարենորոգումները, և որ երբէք չբռնադատուեց մեծ պետութիւններից: Քսան և հինգ տարի այսպիսի բեժիմ կրելուց յետոյ, ահա չորս տարի է, որ Մակեդոնիան ապստամբուած է, հայերը Ռուսաստանի առանձին հովանաւորութիւնից զրկուած՝ չստացան նաև Բերլինի դաշնագրով խոստացուած բարենորոգումները: Հինգ դարերից ի վեր այս ազգը դեռ երբէք այդպէս անողորմ կերպնվ չէր տանջուել քան 1872 թուից սկսեալ:

Այս քսան և եօթը տարուայ ընթացքում Եւրոպայում մեծամեծ փոփոխութիւններ առաջ եկան: Նախ և առաջ Անգլիայում Մենք մի փոքր թողինք անգլիական շահերի այն եսասէր և բիրտ պաշտպանութեան ձեւը, որը թիչ մնաց 1877-ին մեզ պատերազմ տանէր Թիւրքիայի պաշտպանութեան համար: Մեր ժողովուրդը երես դարձրեց այն ջննօֆիզմից, որ այն ժամանակ մեծադղորդ աղմուկով պահանջում էր պաշտպանել այսպէս կոչուած անգլիական շահերը: Անգլիական շահերը բայց հէնց Անգլիայի շահերի տեսակէտից անհրաժեշտ է շարունակ դէպի Պոլիս խաղացող Ռուսիայի ճանապարհին մանր տէրութիւններ, ինքնավար ժողովուրդներ ստեղծել: Հէնց այս էր Գլադատոնի պահանջածը, որի համար նա հոչակուեց որպէս ոռուսամոլ, համարեա մի գաւաճան: Բուլգարիայի քսան տարուայ պատմութիւնը լիուլի կերպով չապացուցեց արդեօք, որ այդ քաղաքականութիւնը դեռ այն ժամանակից լաւագոյնն է եղել:

Այսօր Անգլիան աւելի քան երբ և իցէ թիչ ցանկութիւն ունի միջամտել Մերձաւոր Արևելքում: Մենք համարեա ամենքս համաձայն ենք, որ էլ չենք կարող Խրիմի պատերազմը վերըսկսել Թիւրքիայի պաշտպանութեան համար: Մենք տեսնում ենք, որ Թիւրքական գործերը աւելի նուազ կարևորութիւն ունեն մեզ համար քան ինչ որ մենք կարծում էինք մինչև այժմը: Զգուշանակը սակայն չափազանցութիւններից և այս ուղղութեամբ, մոռացութեան չտանք մեր շահերի արժէքը արևելեան հարցի լուծման ժամանակ: Եթէ մենք կամենում ենք, որ մեր առևտուրի շրջանը չնեղանայ, պէտք է որ ազատ ժողովուրդներ բռնեն Ռուսանի մեռած կայսրութեան տեղը:

Երկրորդ փոփոխութիւնը Ռուսաստանի քաղաքականութեան մէջ է: Ալէքսանդր Ա-ի Ռուսաստանը պատերազմ սկզբանց արևելքում քրիստոնէութիւնը պաշտպանելու և հովանաւոր բելու համար նաւատացած էր, թէ դա իր առաջին պարտաւորութիւնն է: Ալէքսանդր Ա-ի մահը մի անիշխանականի ոռումբով ամեն ինչ փոխեց: Բուլղարիայի ցոյց տուած անկախութեան ձգումները ընդդէմ իր ազատարար Ռուսիայի՝ պատճառ եղան, որ Պետերբուրգի քաղաքականութիւնը դարձաւ սակաւ մեծահոգի: Եւ երբ 1895—1896-ին լորդ Սալլիւլին փորձեց Եւրոպայի միահամուռ գործակցութեամբ վերջ գնել Հայաստանի ջարդերին, նրա հանդէպ ցցուեց իշխան Լորանովը:

Ահա այստեղից առաջ եկաւ Հայաստանի և Մակեդոնիայի երկու տեսակ կացութիւնը (la double situation), մի կողմից նման իրար՝ իրանց ժողովուրդների տառապանքով, և միւս կողմից տարբեր իրարից ուրիշ պայմաններով: Մակեդոնական խնդիրը քարդ է, և մեծ պետութիւնների մրցութեամբ մթագնած: Հայկական հարցը պարզ և որոշ կը մնէր, եթէ մի կողմ թողնուէր քաղաքականութիւնը, և մարդկային տարրական իրաւունքները յարգուէին և թէ Եւրոպան ցանկանար միայն վերջ գնել այդ խայտառակութեամբ:

**

Վերցնենք նախ Մակեդոնիան: Այստեղ առաջին բարդութիւնն ստեղծում են երեք չորս ցեղեր, երկու-երեք կրօններ կամ եկեղեցիներ, որոնք մրցում են իրար հետ: Մի կողմ թողնելով Օտտոման թիւրքերը, իսլամի միջոցով թիւրքացած տեղացիները, և մահմետական ու քրիստոնեայ ալբանացիները, այստեղ բուզարը իշխում է համարեա ամեն տեղ, և բաւական խոշոր մեծամասնութեամբ: Յոյնք գերակշռող թիւ է կազմում միայն ծովափերին և հարաւ արևմուտքում, իսկ սերբը հիւսիսարևմուտքում: Աւելացրէք այս հետաքրքիր և արդիւնաբերող փոքրիկ ժողովուրդը, կուցօ-վալախիներին, լատինական ցեղից և համարեա ըումանական լեզուով: Այս իրար հակառակ չորս ազգերը անհաշտ ատելութեամբ են բռնուած իրար դէմ: Իւրաքանչյւրն ունի կամ ուզում է ունենալ իր Կղերը, իր եկեղեցին, իր դպրոցական կազմակերպութիւնը: Եւ այս ազգային եկեղեցիներից մէկն ու մէկից ծագում է և ընթացք առնում որևէ կռիւը, երեսում տարուց ի վեր, լցնելով մեր թերթերը հեռագրերով: Հարկ է արդեօք ասել, որ թիւրքը, խորամանսկ և նրբամիտ, աշխատում է խմորել և երկարացնել այդ կոկուները: Այդ ժամանակ պետութիւնները միջամտում են: Թիւրքիայի երկու

հարեւանները, Ռուսաստանը և Աւտորիան, որոնք երկուվ էլ սպասում են նրա ժառանգութեանը, հաւասար ախորժակով շրջապատել են մահամերձ հիւանդի անկողինը:

Ռուսիան՝ ինչպէս երևում է, իր յոյսը չի կորցրել մի օր տիրել Պոլիսը՝ և նա պատրաստ ունի զինուորական խոշոր ոյժ թրքական սահմանի երկարութեամբ: Մանջուրիայի պատերազմը ներկայ գէպօւմ արժէք չունի: Այդ հետաւոր երկերը կապուած է Ռուսիայի հետ միմիայն երկաթուղու անվերջ գծերով, մինչդեռ Սև ծովի վրայ նրա զրութիւնը բոլորովին տարբեր է: Եթէ Ռուսաստանը մի կողմից յոյս ունի որևէ բան ձեռք բերել մօտաւոր կամ հեռաւոր ապագայում, նա միենոյն ժամանակ լաւ գիտէ, որ ինքը պատրաստ չէ մի անմիջական տիրապետութեան համար ինչպէս և անկարող է վարել կրկնակի նոյնիսկ եռակի պատերազմ Աւտորիայի, Բուլգարիայի և Թիւրքիայի դէմ: Եւ ահա թէ ինչո՞ւ նա ցանկանում է ստացուածանել: Ներկայ անիշխանութիւնը, որ շարունակում է թուլացնել Թիւրքիան, և բրիտանիաների կրած տառապանքները՝ մի օր կը տան ուռուներին, երբ նրանք գտնեն ժամը յարմար, ըստ իրանց կամաց միջամտելու առիթ: Քանի զեռ գոյութիւն ունի թիւրքական կառավարութիւնը զանազան դժգուութիւններ և խառնակութիւններ միշտ կարող են օժանդակել ուռասկան նպատակների իրագործմանը:

Աւտորիան չի ձգտում ամբողջապէս տիրել Թիւրքիան: Նրա փառասիրութիւնը շատ լայն չէ, բայց խիստ որոշ է: Նա ցանկանում է Մակեդոնիայով անցնել և իջնել Սալոնիկ, Եգեան ծովում մի ծոց ունենալու համար, մինչդեռ Ալբանիայի միջից նա աշխատում է, Աղրիատիրիկի բոլոր ափերը իր ձեռքի տակ ունենալ: Բայց նա բազմաթիւ ծանր արգելքներ ունի այս կրկնակի ծրագիրն իրագործելու համար: Կայսրը ծեր է և ուզում է խաղաղութեամբ մեռնել: Իր ընկերակիցը՝ Ունդարիան, միշտ ծուռ աչքով է նայել որևէ նոր տիրապետութեան, որ գալս է զօրացնելու կայսրութեան մէջ սլաւօնական տարրը: Նոյնիսկ Աւտորիայում կաթոլիկ կուսակցութիւնը տհաճութեամբ կը տեսնէր օրթոդոքս տարրի մէծ աճումը կայսրութեան մէջ: Բոլոր այս պատճանները ստիպում են Աւտորիային առժամանակ ձեռնպահ մնալ: Նրան էլ ձեռնտու է, ինչպէս ուռամներին, որ ստացուածանել կ լինում, որ երկու պետութիւններ, որոնք ամենից աւելի շահագրգուած են և ամենից աւելի հսար ունին միջամտելու, մինչև այժմ արել են, կամ ուզում են անել ամենից քիչ: Նրանք ծրագրել են բարենո-

Այս բոլորի հետևանքն այն է լինում, որ երկու պետութիւններ, որոնք ամենից աւելի շահագրգուած են և ամենից աւելի հսար ունին միջամտելու, մինչև այժմ արել են, կամ

ըոգումներ, նրանք նոյնիսկ այս ծրագրներից մէկը իրագործելու նշաններ են ցոյց տուել տարօրինակ ձևով։ Զարմանալի չէ, որ արդիւնքը, գոնէ դրական արդիւնքը՝ եղաւ զերօ... Մի յուսացէք, որ այդ երկու պետութիւնները ձեռք կ'առնեն երբեհցէ լուրջ բարենորոգումներ թիւրքիական կայսրութեանը ցաւերը դարձմանելու համար։

Ի՞սկ մնացած Եւրոպան։

Գերմանիան Մակեղոնիայում ուղղակի շահեր չունի, բայց նա միշտ կրկնակի շահ ունի բարի յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ և իր հպատակների համար թիւրքիայում ձեռք բերել արդիւնագործական ձեռնարկութիւնների, մատակարարումների կոնսեցիաներ և առևտրական արտօնութիւնները, Հաւատացած եղէք, որ Գերմանիան թիւրքիայի գէմ չի գնայ, բայց կարող էք համոզուած լինել նոյսպէս որ նա սուլթանի իրական պաշտպանութիւնը յանձն չի առնի այն օրը, երբ պետութիւնները կը վճռեն միջամտելու ֆրանսիան տարուերերում է երկու զգացմունքի մէջ։ Մի կողմից նրա բուռն մարդասիրութիւնը, միւս կողմից գէպի ազատութիւնը տածած իր յարգանքը՝ միանում են արևելեան քրիստոնեաների պաշտպանութեան իր հին աւանդութեան հետ։ Բայց նա Ռուսիայի դաշնակիցն է և չէր կամենայ մանանաւանդ այժմ խախտել այդ դաշնակցութիւնը։

Իտալիան ֆրանսիայի պէս կուսակից է կարգի, խաղաղութեան, մարդասիրութեան և ազատութեան։ Բացի այդ նրա մի քանի շահերը պահանջում են, որ Աղրիատիկի վրայ հաւասարակութիւնը պահպանուած լինի, գուցէ և մի փոքր փառասիրութիւն ունի տարածելու իր ազդեցութիւնը Աղրիակական ծովի արևելեան ափերի վրայ։ Բայց այս շահերը նրա համար կենսական չեն և ես կարծում եմ, որ ներկայումս այս փառասիրութիւնը չէ որ առաջնորդում է նրա արտաքին քաղաքականութիւնը։

Ինչ վերաբերում է մեզ՝ Պոլսի փրկութիւնը, նեղուցների ազատ մուտքը, և մեր ուրիշ շահերը թիւրքիայում, մեզ համար այլևս նոյն կարևորութիւնը չունին, ինչ որ սրանից երեսուն տարի առաջ։ Այսուամենայնիւ մենք թոյլ չենք տայ, որ Բալկանեան թերակղզին ընկնի մի մեծ պետութեան ձեռքը։ Մեզ համար լաւագոյնը կը լինէր, որ այս երկում ազատութեան և խաղաղութեան մի բնժիշտ հաստատուէր և լայն ապահովութիւն տրուէր մեր առևտրին։ Աւելացնենք այս շահերին և մեր աւանդութիւնները։ համարեա միշտ, չնայելով ժամանակաւոր խենթութիւններին, մենք կոուել ենք արդարութեան և ազատութեան, 1905.

թեան համար. թիւրքական կառավարութեան գարշելի չարագործութիւնները չեն կարող մեր արդար զայրոյթը չյարուցանել:

Ահա, ըստ իս, վեց պետութիւնների գիրքը իսկ թիւրքիմն: Պէտք է նրա պատմութեանը կատարելապէս անտեղեակ լինել մտածելու համար, թէ այս երկրում որևէ բարենորոգում հնարաւոր է քանի նա գտնում է սուլթանի իշխանութեան, նրա ձեռքի տակ:

Այս խնդրի երկու տեսակ լուծումն հնարաւոր է: Առաջինն է՝ անել Մակեղոնիայում, այն՝ ինչ արուած է Բուլգարիայում և Յունաստանում, այսինքն այդ երկիրը խիել Թիւրքիայից: Երկրորդն է՝ պահպանել սուլթանի անուանական իշխանութիւնը, բայց արգելել նրա անձնական միջամտութիւնը և նշանակել մի նահանգապետ, որ պատասխանատու լինի ոչ թէ սուլթանի այլ պետութիւնների առաջ, տալ այդ երկրին առանձին բիւրջէ անկախ զատավարութիւն, բաւականաշափ իշխանութիւն ժանդարմերիա հաստատելու, ինչպէս կարդ պահպանելու և դատական վճիռներն իրագործելու համար: Համրկ է արդեօք ասել, որ այս երկրորդ լուծումը ներկայումս յարմարագոյնն է, որովհետև չի պահանջում ոչ պատերազմ Թիւրքիայի դէմ, ոչ բաժան-բաժանութիւն ըստ ցեղերի փառասիրութեան, կամ ըստ պետութիւնների ձգտումների: միևնոյն ժամանակ ուղանով կարելի էր տառապող ժողովուրդին տալ իրական սփռվածք:

Բայց ինչպէս ձեռք բերել այսքան ցանկալի հետևանքներ: Աւատրո-ոռուսական ծրագիրը դուրս եկաւ միանգամայն անօգուտ: Այս՝ կամ առաջիկայ տարին այստեղի ազգերը իրանց փրկութիւնը կը փնտուն միայն ապստամբութեան մէջ, որը Թիւրքիան կը զապի բարբարոսաբար, թէ Բուլգարիան չմիջամտի իր զօրքով: Նոր կոտրածներ կը լինին, և եթէ մի մեծ պատերազմ առաջ չգայ, եւրոպան ստիպուած կը լինի մի բան անել, Բայց ի՞նչ:

—Նաւատորմիդ ուղարկենք, գրաւենք երկիրն ամբողջապէս, կամ ափելը, ասում են ումանք: Ես էլ երկար ժամանակ հաւատացած եմ եղել, որ լորդ Սալսբրին Հայաստանում ընտրելով յաջող հոգեբանական մոմենտը կարող էր կանգնեցնել ջարդերը մի բաւականաշափ արագ և եռանգում գործողութեամբ: Ես դեռ այժմ էլ հաւատում եմ, որ եթէ մենք 1895—1896-ին ուղարկէինք մեր նաւատորմիզը Պոլսի առաջ, Թիւրքիան ստիպուած կը լինէր զիջել, փոյթ չէ նոյնիսկ թէ մենք մեն-մենակ լինէինք:

Բայց ստիպել Թիւրքիան դուրս տանել իր զօրքերը Մակեղոնիայից, հաստատել այնտեղ մի քրիստոնեայ նահանգապետ, որ պատասխանատու լինի Եւրոպայի առաջ: Ես ընդունում եմ, որ սա մի գժուարին ձեռնարկութիւն է, Եթէ մենք մենակ լինենք, և չունենանք միւս պետութիւնների օժանդակութիւնը: Բայց այս խոշոր՝ գործը, այս գժուարին գործը հեշտութեամբ գլուխ կը գար, եթէ երկու կամ երեք պետութիւններ միանային: Սուլթանը երեքի սպառնալիքի տակ հաւանականաբար կը զիջէր, եթէ ի հարկէ չստանար որևէ պետութեան իրական աջակցութիւնը, բայց յատկապէս որ պետութեան, ես չգիտեմ:

Երկու կամ երեք պետութեան համերաշխութիւն, ահա այն սպատակը, որին մենք շարունակ պէտք է ճգտենք առանց դադարի, օգտուելով բոլոր յաջող պարագաներից և աշխատելով մանաւանդ գրաւել այն երկու ժողովուրդներին, որոնք ամենից աւելի զգայուն են մարդասիրութեան և արդարադատութեան համար. խօսքս Խոտալիայի և Ֆրանսիայի մասին է: Սա Լանդստոունի քաղաքականութիւնն է, որ նա պարզել է և գործ է զնում կարծեմ մի տարուց ի վեր, և ես յոյս ունիմ, որ նա նրանից չի հրաժարուի: Ահա թէ լինչու, ոչ ժողովներում, ոչ պարլամենտում, մենք հակառակ կուսակցութեան անդամներս ոչինչ չենք ասել, իր անձի, իր հայեցքների և իր յոյսերի դէմ: Առ առաւելն մենք ցանկացել ենք, մենք ներշնչել ենք մի աւելի կենդանի, աւելի յարատե յարաբերութիւն դէպի Խոտալիան և Ֆրանսիան Առանց Խոտալիայի և Ֆրանսիայի աջակցութեան ես նախատեսում եմ Մակեղոնիայում զեռ երկար տարիների խառնակութիւններ և թշուառութիւններ, մինչև որ հասնի այն օրը, երբ իրերի այդ անտանելի կացութիւնը առաջ կը բերի Եւրոպական միջամտութիւն, որ գուցէ այն ժամանակ կարժենայ հազարաւոր մարդկային կեանքեր:

* *

Հայաստանում խնդիրը շատ աւելի պարզ է. գոնէ պետութիւնների շահերն այնտեղ նուազ կարեռ և սակաւաթիւ են: Միմիայն Ռուսաստանն է, որ կարող է քաղաքական հայեցակէտեր մէջ բերել: Միւս պետութիւնները ինչպէս և Անգլիան այստեղ միայն մարդասիրական պարագեր ունին: Եթէ այդ քրիստոնեայ կոչուած պետութիւնները պարտքի ամենափոքը գիտակցութիւնն ունենային, հայկական հարցը կը լուծուէր առանց որ և է դժուարութեան: Բաւական էր նշանակել Եւրոպայի հանդէպ պատասխանատու մի նահանգապետ որ ունենար առանձին բիւղչէ և բաւարար իշխանութիւն կարգը պահպա-

նելու, պաշտօնեաների զեղծումներին և քիւրդերի կողոպուտներին զեղծ գնելու համար. և հարցը կարելի էր լուծուած համարել: Արդ, ոչ Գերմանիան և ոչ Աւստրիան երբէք չեն զբաղուել Հայաստանով: Ռուսաստանից համաձայնութիւն առնելը այս ծրագրի համար եւ համարում եմ ոչ կասկածելի և ոչ դժուար, բաւական է, որ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան, համերաշխաբաւար ճնշում գործ դնեն Պետերբուլգում:

Ես վերջացրի: Դարձեալ երկու դիտողութիւն եղափակելու համար: Ներկայում ընդհանուր դրութիւնը չափազանց կրիտիկական է և դժուար բացատրելի, որովհետև Մերձաւոր Արևելքի հարցը կարող է կապուել ուրիշ անցքերի հետ՝ հեռաւոր կամ մօտիկ եւրոպական կամ ասիական:

Աւստրօ-ռւսկարական պետութիւնը կրիզիսի մէջ է: Դժուար է ասել, թէ ի՞նչ դուրս կը գայ այս աւստրօ-ռւսկարական դուալիզմի վերակազմութիւնից, որ երկու տարուց ի վեր փորձում են: Ռուսաստանը պակաս ծանր կացութեան մէջ չէ: ութ օրից, մի ամսից յետոյ արդեօք ի՞նչ կը պատահի. խաղաղութիւն կը կնքի և կարգ կը հաստատի՞ իր ներքին նահանգներում, թէ կը շարունակի պատերազմը և կը փոխի իր կառավարութեան ձևը. և ի՞նչ նոր ձև կը ստեղծի նա, և ի՞նչ հականարուած կ'ունենայ այս ներքին փոփոխութիւնը նրա արտաքին քաղաքականութեան վրայ:

Նոյնիսկ Թիւրքիայում տեսէք թէ որպիսի խառնակութիւններ ու ապատամբութիւններ կարող են տակն ու վրայ անել Արաբիան, մուսուլման Ասիան, ինչպէս և քրիստոնեայ Բալկանը: Տարօրինակ չէ ազգայնական զգացմունքի այս զարթնումը Ասիայում: Այսօր արարը չի կամենում ընդունել սուլթանին որպէս հոգեոր և մարմնաւոր պետ, որպիս խալիֆ բոլոր մուսուլմանների: Արաբների այս զարթնումը մեծամեծ փոփոխութիւններ առաջ չի բերի արդեօք Օսմանեան կայսրութեան ներսում: Խոլամ աշխարհում միայն արարը չէ սակայն որ առում է թիւրքին: Տարօրինակ ժամանակներ են մեր ժամանակները. ամեն տեսակ անակնկալներ կարող են ամեն ըովէ տեղի ունենալ:

Ահա իմ առաջին դիտողութիւնը: Դառնանք երկրորդին: Ո՞րպիսի սկզբունքներով պիտի առաջնորդուի մեր արտաքին քաղաքականութիւնը Երբեմն ասում են, որ միմիայն զաղթական և առևտրական շահերը մեզ պիտի առաջնորդեն: Ես չեմ կարծում, որ մեր աղքային կեանքի մի այսպիսի նեղ հասկացողութիւն կարողանայ բաւականութիւն տալ մեր ժողովրդի սրտին և հոգուն: Այս ժողովուրդը, հաստատ իմացէք, պիտէ,

որ ինքը և պարտքեր ունի, և՝ շահեր: Ես չեմ ուզում մեր երկիրը ասպետական արկածների մղել, ինչքան և ազնիւ լինէր, այդպիսի փառասիրութիւնը խենթութիւն է մեզ կամ եւրոպացի համար պատերազմի վտանգ ստեղծել, որից կարելի էր խուսափել: Բայց զգուշութեամբ և վարպետօրէն Անգլիայի զօրութիւնը ծառայեցնել արդարութեան և ազատութեան գործին, ըստ իս, մի ազգային պարագ է:

Այսօր մենք առիթ ունենք գործ զնելու մեր ազդեցութիւնը Բալկանեան քրիստոնեաների պատութեան, նրանց ցաւերի թեթևութեան և այն անարդարութեան մեղքը քաւելու համար, որ 1878-ին լորդ Բիկոնսֆիլդի բաղաքականութիւնը պատճառել էր նրանց: Կը հրաժարութենք արդեօք բոլոր մեր աւանդութիւններից: Յոյս կայ որ հտալիան և Ֆրանսիան կը միանան մեզ հետ: Յոյս կայ, որ Ամերիկան կը տայ մեզ իր բարոյական աշակեցութիւնը, դուք գիտէք, որ նախազահ Ռուզվելտը այդ միտքն արտայայտեց և գիտէք նոյնպէս, թէ ամերիկական ժողովուրդը ինչպէս ընդունեց նրա ասածը:

Ուզիդ նայենք ուրեմն այն նպատակին, որին պիտի հետևենք, և այն միջոցներին, որ մենք կարող ենք տրամադրել: Նպատակը հետևեալն է: Սուլթանից ազատուած երկրներում հաստատել ինքնավար ազգեր և նահանգներ, առանց թոյլ տալու, որ նրանց վրայ ծանրանայ հարեան պետութիւնների լուծը: Միջոցները—ահա, թիւրքական կայսրութեան մէջ ապրուած են եռանդու, գործունեայ, խելացի ցեղեր: Բուլգարը ուժեղ է, համբերող, քաջ, դիմացկուն, որ փորձով ցոյց տուեց պատերազմի դաշտում, ինչպէս արուեստների մէջ և խաղաղութեան ժամանակ: Հայը դարերից ի վեր ապրում է իր նախնիքների կրօնի և լեզուի փառաւոր աւանդութիւններին անյողգողդ հաւատարմութեամբ: Ամենադառն հալածանցները չկարողացան նըրան վերջնականապէս ընկճել և ոչնչացնել. ազգը միշտ յարատեեց, ուաքի ելաւ, նա կարողացաւ շնորհիւ իր գերազանց ընդունակութիւնների, իշխանութիւն և ազդեցութիւն ձեռք բերել, ինչպէս մի ժամանակ բիւզանդական կայսրութեան մէջ, երբ նա տուեց այնքան նախարարներ և զօրավարներ:

Մի մոռացէք մանաւանդ այս փոքրիկ, բայց արի ալբանական ազգը: Բնութիւնը օժանել է ալբանացուն այնպիսի ուժով և արիութեամբ, իշխելու այնպիսի ողով և գերազանց կարողութեամբ, որ նա այսօր ամբողջ արևելեան իսլամի մէջ գրաւում է առաջնակարգ տեղ: Եթէ ալբանացիք իրանց լեռների ծոցերում մնացել են կիսավայրենի, մեղքը նրանցն է, ո-

ըսնք զրկել են այդ ժողովրդին քաղաքակրթութեան ազդեցութիւնից:

Որպէսի գժբախտութիւն, եթէ այս բոլոր ազգութիւններից իւրաքանչիւրը չհամնի ազատ զմրգացման, անկախ կեանքի, հեռու որևէ բռնակալութիւնից ինչպէս և որևէ է երկրի հետ միանալուց եւ ընդհակառակը որպիսի բարիք, որպիսի ապահովութիւն նրանց համար, եւրոպայի համար, մարդկութեան, գուցէ և քաղաքակրթութեան ալզագայի համար, թէ նրանցից իւրաքանչիւրը կառողանայ պահպանել իր անհատականութիւնը և աղասորէն տնօրինէ իր ճակատագիրը։ Այժմէն իսկ արևմտեան ազգերի շահը պահանջում է, որ այս ազգերը չընկնին ոռուսական կամ աւստրիական լծի տակ։ Բայց պէտք չէ սահմանափակել մեր ծրագրերը և ոչ նեղացնել մեր հայեացքը այսօրուայ մանը շահերի համեմատ։ Մեր նեղ հորիզոննից աւելի հեռու ով գիտէ քաղաքակրթութեան վերջնական յաղթանակի համար ապագան ի՞նչ է վերապահել այս երիտասարդ, ուժեղ, ազգերի համար, որոնք ազատուելով թիւրքական անարզութիւններից, և ձեռքբերելով պատուաւոր և ապահով կեանք, գուցէ կը տան այդ գժբախտ Արևելքին բարօրութիւն, խաղաղութիւն և հին դարերի փառքը։

ԶԵՄՍ ԲՐԱՅԱ